ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

NATHAN J. HOCHMAN
ՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

da.lacounty.gov @LADAOffice @LACountyDA

Ի՞նչ է Երեխաների Նկատմամբ Բռնությունը

Երեխաների նկատմամբ բռնությունը ներառում է տասնութ տարեկանից ցածր անձի նկատմամբ կիրառած վատ վերաբերմունք, վնասվածք կամ շահագործում, որոնք արտահայտվում են հետևյալ կերպ՝ ֆիզիկական, սեռական, հուզական ձևերով կամ անուշադրության մատնելու կամ անտեսման միջոցով:

Բռնությունը դա միտումնավոր կերպով երեխայի առողջությունը և անվտանգությունը վտանգելն է: Կալիֆորնիայի օրենքի համաձայն, երեխայի նկատմամբ կիրառած բռնություն են համարվում՝

- **Ֆիզիկական** բռնությունը դա երեխային միտումնավոր կերպով պատճառած ֆիզիկական վնասվածքն է՝ ներառյալ մարմնական պատիժը, որի արդյունքում առաջանում են այնպիսի տրավմատիկ վիճակներ, ինչպիսիք են՝ կապտուկը, այրվածքը, կտրվածքը, կծածի հետքը, քերծվածքները, ոսկորի ճաքը/կոտրվածքը կամ ներքին վնասվածքը: Երեխային դիտավորյալ կերպով պատճառած անհիմն ֆիզիկական ցավը համարվում է բռնություն:
- **Սեռական** բռնությունը տասնութ տարեկանից ցածր երեխայի նկատմամբ սեռական ոտնձգությունը կամ շահագործումն է: Այն ներառում է՝ երեխայի հանդեպ սեռական հպումները, երեխայի մարմնի ցանկացած բացվածքից ներս սեռական ներթափանցումը և երեխային բռնարարի մարմին ներթափանցել կամ երեխային ստիպել սեռականորեն հպվել բռնարարի մարմնին: Երեխայի ներկայությամբ սեռական ակտիվության դրսևորումը նույնպես սեռական բռնություն է: Երեխային սեռական ակտիվության մեջ ներգրավվելը կամ նրան խրախուսել, հարկադրել կամ ստիպել, որ սեքսուալ ձևով կեցվածք ընդունի ինչպես նաև սեռական ակտիվությամբ զբաղվող երեխային լուսանկարելը հանդիսանում են սեռական բռնություններ:
- **Էմոցիոնա** /հուզական բռնությունն իրենից ներկայացնում է մի վարքագիծ, որը ներառում է՝ ծայրաստիճան հայհոյանքներ, նվաստացում, սպառնալիք, ահաբեկում և ծաղրանք՝ երբեմն երեխայի մոտ հանգեցնելով հուզական, վարքագծային և ճանաչողական խանգարումների: Երեխային՝ բնականոն կենսագործունեությունից, ջերմությունից, ուշադրությունից կամ մարդկային շփումներից զրկելը համարվում է էմոցիոնալ բռնություն: Երեխային դիտմամբ, անհիմն կերպով մտավոր տառապանք պատճառելը նույնպես համարվում է բռնություն:
- **Անուշադրության մատնումը/ անտեսումը** ի հայտ է գալիս, երբ ծնողը, խնամակալը կամ երեխայի խնամքի և բարեկեցության համար պատասխանատու մեկ այլ անձը չի տրամադրում պատշաճ սնունդ, հագուստ, կացարան, հսկողություն կամ բժշկական խնամք՝ այպիսով վտանգելով կամ վնաս հասցնելով երեխայի ընդհանուր առողջությանը:

Խիստ անուշադրության մատնումը/ անտեսումը ներառում է անյպիսի իրավիճակներ, որտեղ երեխայի մոտ զարգանում է զգալի թերսնուցում կամ բժշկի կողմից ախտորոշված առողջական խնդիր, քանի որ խնամակալը չի ապահովում երեխայի կարիքները՝ միտումնավոր կամ անփութության պատճառով:

Ընդհանուր անտեսումը տեղի է ունենում, երբ խնամակալը չի կարողանում բավարար չափով ապահովել երեխայի կարիքները, որի արդյունքում երեխան համեմատաբար մեծ ռիսկի է ենթարկվում ծանր ֆիզիկական վնաս կամ հիվանդություն ունենալու: Անհրաժեշտ չէ, որ երեխայի նկատմամբ ֆիզիկական վնասվածք իրականում տեղի ունենա:

Երեխաների նկատմամբ բռնությունը և անտեսումը արգելող օրենքները կիրառվում են նաև՝ խնամատար տների, հաստատությունների, գործակալությունների, դպրոցների, ճամբարների և տնից դուրս խնամքի այլ գործող կազմակերպությունների նկատմամբ՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում:

ՋԵԿՈՒՑԵ՛Ք ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՏԵՍՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեխաների Պաշտպանության Թեժ Գիծ
(800) 540-4000
Անվճար է Կալիֆորնիայում

Կալիֆորնիայից դուրս
(213) 639-4500

TDD
(800) 272-6699

Առանցքային հարցեր երեխաների նկատմամբ բռնության մասին

Ինչ է անհրաժեշտ անել երեխաների նկատմամբ բռնության տուժված լինելու դեպքում

Պատմեք ինչ-որ մեկին այդ մասին: Օգնություն խնդրեք վստահելի չափահասից, օրինակ՝ ուսուցիչից, դպրոցի խորհրդատուից, տնօրենից, հարազատից, ընկերոջ ծնողից կամ ոստիկանությունից, կամ կարող եք զանգահարել Երեխաների պաշտպանության թեժ գիծ հետևյալ հեռախոսահամարով. **(800) 540-4000**.

Ինչ է անհրաժեշտ անել, եթե գիտեք, կամ կասկածում եք, որ երեխան բռնության է ենթարկվում:

Եթե բռնությունն ընթացքի մեջ է, կամ կարծում եք, որ երեխային անմիջական վտանգ է սպառնում, զանգահարե՛ք **911:** Կարող եք նաև զանգահարել երեխաների պաշտպանության թեժ գիծ՝ հետևյալ հեռախոսահամարով. **(800) 540-4000**.

Ինչ է տեղի ունենում, երբ բռնության մասին տեղեկացվում է:

Ձեկույցը քննվում է իրավապահ մարմինների, Երեխաների և ընտանեկան ծառայությունների բաժնի աշխատողի կամ երկուսի կողմից՝ կախված հանգամանքներից:

Ինչ է տեղի ունենում քննությունից հետո:

Եթե իշխանությունները պարզեն, որ երեխաների նկատմամբ բռնություն է տեղի ունեցել կամ հավանական է, որ տեղի է ունեցել, համապատասխան գործակալությունը քայլեր կձեռնարկի՝ երեխային ապագա վնասից պաշտպանելու համար: Սա կարող է ներառել ընտանիքին տրամադրվող ուղղորդումներ և ծառայություններ կամ լրացուցիչ հետաքննության անցկացում:

Որոշ դեպքերում իրավապահները կարող են երեխաների նկատմամբ բռնության դեպքերը փոխանցել շրջանային գլխավոր դատախազություն՝ հնարավոր քրեական դատավարություն համար: Շրջանային դատախազությունը վերանայում է նման դեպքերը՝ պարզելու, թե արդյոք բավարար ապացույցներ կան մեղադրանք առաջադրելու համար:

Շրջանային դատախազությունն ունի հատուկ պատրաստված դատախազներ, ովքեր զգայուն են բռնության ենթարկված երեխաների կարիքների նկատմամբ և անումն են այնպես, որ երիտասարդ տուժվածները հնարավորինս ապահով և հարմարավետ զգան գործընթացի ընթացքում:

Ծառայություններ Տուժվածների Համար

Գլխավոր դատախազության՝ Տուժվածների համար Ծառայությունների Բյուրոն հասանելի է Լոս Անջելես շրջանի դատարաններում և ոստիկանական բաժանմունքներում:

Բյուրոյի ներկայացուցիչներն օգնություն և ռեսուրսներ են տրամադրում բռնության կամ բռնության սպառնալիքների տուժվածներին և նրանց ընտանիքներին, որը ներառում է խորհրդատվական ծառայությունների ապահովում՝ երեխային տրավմայից հանելու նպատակով:

Հասանելի կամ առկա այլ ծառայություններից են նաև՝ քրեական արդարադատության կողմնորոշում, դատական աջակցություն, պաշտպանական կարգի օգնություն, շտապ ապաստան, սնունդ և հագուստ, ֆինանսական փոխհատուցում կրած վնասների համար, և Կալիֆորնիայի Տուժվածների Փոխհատուցման Խորհրդից (CalVCB) փոխհատուցում ստանալու համար հայտադիմումների լրացման հարցում օգնություն:

Տեղեկատվություն առանց փաստաթղթերի կամ չգրանցված տուժվածների և վերապրածների համար

Տուժված կողմից չի պահանջվում ունենալ օրինական ներգաղթային կարգավիճակ՝ ծառայություններից օգտվելու համար: Համաձայն դաշնային օրենսդրության, առանց փաստաթղթերի/չգրանցված որոշ տուժվածներ, որոնք ենթարկվել են զգալի ֆիզիկական կամ մտավոր բռնության, իրավասու են դիմել U ոչ ներգաղթային կարգավիճակի վիզայի համար (U Visa): Տուժվածներին՝ U և T վիզաների հայտադիմումների լրացման գործընթացում աջակցող տեղական, շահույթ չհետապնդող գործակալությունների ցանկին ծանոթանալու համար, խնդրում ենք այցելել՝ **da.lacounty.gov/victims/uvisa/uvisa-tvisa-assistance-agencies**.

Սկանավորե՛ք այստեղ՝ դիտելու բոլոր բրոշյուրները առցանց:

Տուժվածների Իրավունքները

Կալիֆորնիայի օրենքը պաշտպանում է հանցագործության վերապրածներին գործատուների և գույքի սեփականատերերի կողմից հնարավոր վնասակար գործողություններից:

Աշխատողների Իրավունքները

Ձեր գործատուն չի կարող աշխատանքից ազատել կամ պատժել Ձեզ աշխատանքի չգնալու համար, եթե Դուք հանցագործության պատճառով տուժված եք կամ փորձում եք դատարանից խափանման միջոց կամ այլ իրավական պաշտպանություն ստանալ Ձեր կամ Ձեր երեխայի բռնարարի դեմ: Եթե Ձեր գործատուն պատժում է Ձեզ, Դուք իրավունք ունեք վերընդունվելու և փոխհատուցում ստանալ Ձեր կորցրած գումարի դիմաց: Ձեր գործատուից պահանջվում է գաղտնի պահել Ձեր իրավիճակի մասին ցանկացած տեղեկատվություն:

Եթե Ձեր գործատուն ունի ավելի քան 25 աշխատող, ապա նա չի կարող պատժել Ձեզ՝ հետևյալներից որևէ մեկը հայցելու համար.

- Բժշկական օգնություն հանցագործության հետևանքով առաջացած վնասվածքի դեպքում
- Ծառայություն ընտանեկան բռնության կացարանից կամ ցանկացած այլ ծառայությունից, որն աջակցություն է տրամադրում տուժվածներին
- Հոգեկան առողջության ծառայություններ հանցագործության համար
- Ձեր անվտանգությունն ապահովելու ուղիներ, օրինակ՝ Ձեր բնակության վայրի ժամանակավոր կամ մշտական տեղափոխումը

Վարձակալի Իրավունքները

Դուք իրավունք ունեք վարձակալությունը դադարեցնելու և Ձեր երաշխիքային ավանդը վերադարձնելու, եթե Դուք, Ձեր երեխան կամ Ձեր ընտանիքի մեկ այլ անդամ կամ անմիջական ընտանիքի անդամ բռնության հետ կապված հանցագործության տուժված եք դարձել: Ձեր տանտերը նաև չի կարող դադարեցնել Ձեր վարձակալության պայմանագիրը կամ հրաժարվել երկարաձգել վարձակալության պայմանագիրը, քանի որ Դուք կամ ընտանիքի անդամը եղել եք ընտանեկան բռնության, սեռական բռնության, հետապնդման, մարդկանց թրաֆիքինգի կամ տարեցների կամ կախյալ չափահասների նկատմամբ բռնության տուժված:

Տուժվածների իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք Marsy's Law-ի բրոշյուրը. **da.lacounty.gov/marsys-law**.